ԶԻՆՎՈՐԻ ԱՅՐՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Հայրը՝ Ղարաշ Հայրիյանը, Զանգեզուրի կռիվների ժամանակ իր կնոջ՝ Սոֆիայի հետ մեծ դժվարություններով անցավ Ղարաբաղի լեռնաշխարհը և բնակություն հաստատեց մարզի ծայրագույն գյուղերից մեկում՝ Վաղուհասում։ Տեղացիները նրան մեծ սիրով ընդունեցին։ Այստեղ սեփական տուն կառուցեց, ունեցավ յոթ զավակներ՝ Արմենակը, Սայադը, Սիրանուշը, Հայկանուշը, Վարդուհին, Թագուհին և Արևհատը։ Վերջինի՝ Արևհատի ճակատագրի մասին է, որ ես ցանկանում եմ ծանոթացնել ընթերցողներին։

Արևհատը ամուսնանում է Ֆրեյդունի հետ, որը ճանաչված որմնադիր էր։ Ստեղծվում է մի գեղեցիկ, համերաշխ ընտանիք, ունենում են երեք արու զավակներ։ Ֆրեյդունի երկու եղբայրներիր՝ Հովհաննեսն ու Վարդանը, ապրում էին նրա հետ (քանի որ նրանք վաղուց էին զրկվել ծնողներից)։ Մի խոսքով, աշխատանքի հասած երեք տղամարդ և մանկահասակ երեք արու զավակներ։ Ինչպես ասում են՝ Արևհատի ձեռքին ձեռք էր բուսած, ոտքին՝ ոտք, ուրախությանը սահման չկար։ Ո՞վ կուներար այդպիսի բախտ. մի ընտանիքում վեց տղամարդ, հետագայում կլիներ վեց ընտանիք. վեց ծուխ։ Տանը աշխատանքը եռում էր։ Ֆրեյդունը նոր տներ էր գյուղում կառուցում։ Մարդիկ հերթ էին կանգնում նրան իրենց մոտ աշխատանքի տանելու համար։ Ուրախ էր Արևհատը՝ հոգատարությամբ և մանկահասակ երեխաներով շրջապատված։ Սակայն նրա ուրախությունը երկար չտևեց. վրա հասավ Հայրենական մեծ պատերազմը։ Շատերի հետ ռազմաճակատ մեկնեց Ֆրեյդունը, կիսատ պատին թողնելով մալան ու մուրճը։ Նրա հետ ռազմաճակատ մեկնեցին եղբայրները՝ Հովհաննեսն ու Վարդանը։ Արևհատը մնաց մենակ երեք մանկահասակ երեխաների հետ։ Պետք էր աշխատել։ Երեխաներից փոքրիկին շալակած, մյուս երկուսի ձեռքերից բռնած՝ դաշտ էր գնում։ Հազարու մի գործ էր կատարում։ Արորի մաճ էր բռնում, հոտաղ էր, բահը ձեռքին հող էր մշակում։ Մի խոսքով, կոլտնտեսությունում մասնակցում էր բոլոր դժվար աշխատանքներին, կատարում կնոջ և տղամարդու գործ։ Աշխատում էր հաղթանակի և ամուսնու վերադարձի հավատով։

Պատերազմը վերջացավ։ Հաղթանակի լուրը կայծակի արագությամբ հասավ նաև Վաղուհաս գյուղը՝ Արևհատին։ Նրա ուրախությանը սահման չկար՝ ամուսինը կվերադառնա տուն, կտեսնի, որ կինը երեխաներին ողջ և առողջ պահել է։ Նորից կսկսեն իրենց նախկին կյանքը։ Սակայն գյուղ էին վերադառնում մասնակիցները, իսկ Ֆրեյդունը իր եղբայրների հետ չկար։ Արևհատը վերադառնողներից մեկ-մեկ հարցնում էր՝ Ֆրեյդունին, Հովհաննեսին, Վարդանին չե՞ն տեսել։ Դրական պատասխան չկար։ Վաղուհասցիների համար դա եզակի դեպք չէր։ Պատերազմ մեկնածների համարյա թե կեսը չի վերադարձել։ Առայսօր չեն վերադարձել Դագուշ Բեկնազարյանի չորս որդիները՝ Ջալալը, Խաչատուրը, Խոսրովը, Վասակը, Առստամ Հայրապետյանի երեք որդիները՝ Պողոսը, Բախշին, Շմավոնը և այդպես շատերը։ Պատերազմը վերջանալուց հետո ծանր էր գյուղի վիճակը, առանձնապես այն ընտանիքների վիճակը, որտեղ տղամարդու ձեռք չկար։ Արևհատը մտածեց ու որոշեց գնալ գյուղից։ Փոքր որդուն՝ Սուրենին վերցրեց ու գնաց։ Գնաց Սումգայիթ, որդու հետ մասնակցեց քաղաքի կառուցմանը։ Հույս ունենալով, որ եթե քաղաքը իրեն դուր գա, ապրուստը լավ լինի, իր մոտ կկանչի նաև մյուս երկու տղաներին...

Սումգայիթի փետրվարյան դեպքերից երկու-երեք օր հետո ես այդ կնոջը տեսա իր որդու հետ Բաքվի ավտոկայանում։ Գյուղ էին վերադառնում։

Այժմ զինվորի այրին գյուղ է վերադարձել, վերադարձել է հայրենի օջախը։ Նրան գրկաբաց են ընդունել բարեկամները ու նախկին հարևանները, որդիներն ու թոռները։ Չնայած պատկառելի տարիքին, հայրենի եզերքը ոգի ու եռանդ է տվել նրան։ Նա այժմ ակտիվորեն է մասնակցում գյուղի կյանքին։

Լ. ՍԱՅԻՅԱՆ